
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ՝ ՋԻՎԱՆՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊՈՂՈՍՅԱՆ Թ. Գ.

XIX դ. դարի երկրորդ կեսին հայ աշուղական երգարվեստ մուտք գործեցին նոր թեմաներ ու մոտիվներ, որոնք անմիջականորեն պայմանավորված էին ժամանակաշրջանի քաղաքական ու հասարակական իրադարձություններով: Գ. Լևոնյանի այն միտքը, թե՝ «Աշուղը ժողովրդի ժամանակագիրն է ու արձագանքը», հիրավի, ամենից ավելի վերաբերում է Ջիվանուն, որը նշված ժամանակաշրջանի աշուղներից ամենագգայունն էր ու ամենատաղանդավորը: Ջիվանու ստեղծագործական կերպարը բնութագրվել է գերազանցապես տպագիր երգերի հիման վրա: Հայրենասիրական մոտիվները քննարկվել են՝ նկատի ունենալով հանրահայտ «Ես մի ծառ եմ ծիրանի», «Ազգ իմ, որքան նկուն մնաս», «Առանց վախի, առանց ահի» և նման այլ երգեր: Մինչդեռ նրա ողջ ժառանգության մեջ պահպանված ու մեզ հասած մի շարք ստեղծագործություններում հայրենասիրական մոտիվներն ավելի հարուստ են, բազմազան ու ընդգրկուն: Ջիվանին անմիջականորեն արձագանքել է իր ժամանակի հայ հասարակությանն հուզող իրադարձություններին և իբրև իր ժողովրդի հավատարիմ զավակ ու ճշմարիտ հայրենասեր՝ պատրաստ է եղել իր անձով ու քնարով ծառայել նրան:

XIX դարավերջին և XX դարասկզբին ծավալված ազգային-ազատագրական շարժումները Եվրոպայում, որոնց ծիրի մեջ էր ներքաշված թուրքական լծի տակ հեծող արևմտահայությունը, բնականաբար, անտարբեր չթողեց իր ժողովրդի ներկային ու ապագա ճակատագրին հետամուտ հայրենասեր աշուղին: Ջիվանին խորապես հասկացավ, որ իր ապրած ժամանակներում ուժն ու զենքը վճռորոշ դեր են խաղում: «Տխուր փաստեր»¹ վերնագրով երգում նա, թվարկելով իրական կյանքում իշխող, տիրապետող երևույթները, գալիս է այն եզրակացության, որ տիրապետողը բիրտ ուժն է. «Տեսնում ես՝ սարեր կը քանդե մեկ վառողի տակառը»²:

Ջիվանին իր «Հայրենիքի պատվի համար» սկզբնատողով երգում (1904 թ.) հայ մարդու գնահատության չափանիշը համարում է նրա օգտակարությունը հայրենիքին.

**Հայրենիքի պատվի համար
Մեռնողը իսկ նահատակ է,**

¹ Ջիվանու քնարը, կազմեց Ա. Սահակյանը, Ե., 1959, էջ 344 - 345:

² Նույն տեղում, էջ 345:

**Ով կաշխատի ազգի համար,
Հարագատ ազգի գավակ է՝:**

Զիվանին հայ ժողովրդի ազատագրական պայքարին մասնակից է եղել ոչ միայն իր քնարով: Վավերագրերը վկայում են, որ նա բարեկամական, ընկերական կապեր է ունեցել Ալեքսանդրապոլում կազմակերպված «Բարենպատակ» հայրենասիրական ընկերության անդամների հետ⁴: Ակադ. Մ. Ներսիսյանի մի արժեքավոր աշխատության մեջ որոշակի տվյալներ են հաղորդվում Զիվանու հայրենանպաստ գործունեության վերաբերյալ: 1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Արևելյան Հայաստանում ծայր առած կամավորական շարժման ոլորտում ընդգրկված էր նաև հայաշունչ ու հայաշատ, սահմանամերձ Ալեքսանդրապոլը: Քաղաքում ընտրվում է հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով՝ կամավորական խմբերը կազմակերպելու և նրանց գործունեությունն ուղղորդելու նպատակով: Այդ հանձնաժողովի անդամ էր նաև Զիվանին⁵:

Ելնելով նրա ստեղծագործություններում տեղ գտած պատմա-հայրենասիրական մոտիվներից, նրանցում առկա տրամադրություններից՝ կարող ենք ասել, որ եվրոպական երկրների՝ Հայաստանի և Հայկական հարցի հանդեպ ունեցած վերաբերմունքից Զիվանին չի հուսավառվել: Բեռլինի վեհաժողովի մասնակից տերություններին նա անվանում է «նենգ պիղատոսներ», ամենայն հավանականությամբ, Անգլիային՝ «ազահ, խորամանկ սատանա»: Աշուղը Թուրքիային և արյունոտ սուլթանին, անվանում է «գայլ», «կարմիր դև», «կարմիր բորենի»⁶:

Եվրոպայի հարցում նրա ունեցած վերաբերմունքն են բնորոշում հետևյալ տողերը.

**Ո՛հ, մեկին չի ազատիլ մեր խրախույսը,
Խավարի փոխվեցավ օտարի լույսը,
Եվրոպայի վերա դրինք մեր հույսը,
Չլսեցինք որևէ մեկ լուր, շատ ափսոս՝:**

Աշուղն առանձնապես հույսեր չի տաձել, թե կկործանվի թուրքական բռնապետությունը: Բեռլինի վեհաժողովից կարճ ժամանակ անց Զիվանին համոզվում է, որ այն միայն չարիք է բերում արևմտահայությանը, աղետներին նորերն ավելացնում: «Ղոշմա», «Տասիթան» երգերը նրա դառը խոհերի ու

³ Աշուղ Զիվանի, Անհայտ երգեր (այսուհետև՝ **ԱԶԱԵ**), աշխատ.՝ Թ. Պողոսյանի, Ե., 2009, էջ 386:

⁴ Պարսամյան Վ. Ա., Հայ ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1959, էջ 132:

⁵ Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Ե., 2002, էջ 159:

⁶ ԱԶԱԵ, էջ 548, 351:

⁷ Նույն տեղում, էջ 275:

ապրումների արտահայտությունն են: «Եղեր ոտից կոխան չնչին առարկա»,
ցավով է արձանագրում Ջիվանին.

**Յոթանասուն ու վեց թվից մինչ ութսուն
Լրանալը, թափեց քո աչգերը արյուն,
Քանդեցին քո բնակարան և քո տուն,
Այն խաժամուժ վատ ազգերը սրիկա⁸:**

Սակայն եղավ մի կարճատև շրջան, երբ հայ ժողովրդի մի զգալի մասը
հավատ ընծայեց 61-րդ հոդվածի գործադրման միջոցով արևմտահայերի
վիճակի բարելավմանը: Աշուղը դառը մտածումներով վերհիշում է.

**Հավատացինք ձեր կեղծ փայլին, Նստեցինք կրակե սայլին,
Մեզ հանձնեցինք կարմիր գայլին,
Անտեր հոտի նման, քեռի⁹:**

Նա վերջնականապես համոզվում է, որ «հիվանդ մարդը» մեռնելու
նշաններ ցույց չի տալիս.

**Ով է քեզ ասել, թե բորենու մոտիկ է մահը,
Երազ է, Ջիվան, այդ բանը ո՞ւմնից ես իմացել¹⁰:**

Ջիվանին հարազատ ժողովրդի վիճակին անդրադարձել է Սան
Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ հոդվածի, ապա Բեռլինի վեհաժողովի
կողմից վերջինիս՝ 61-րդ կետի վերածվելու առիթով¹¹: Հայ հասարակության
որոշ շրջաններ դեռևս հույսեր էին փայփայում այդ հոդվածի ու Եվրոպայի
ազատագրական առաքելության նկատմամբ: Աշուղը իրատես քաղաքագետի
խորաթափանցությամբ նկատում է (1904 թ.).

**Նախանձները վաթխունումեկ դարձրին,
Նենք պիղատոսները ինձ բժիշկ դառան,
Հին ցավերուս վրա նորից ցավ դրին¹²:**

⁸ Նույն տեղում, էջ 320:

⁹ Նույն տեղում, էջ 430:

¹⁰ Նույն տեղում, էջ 351:

¹¹ Այդ հոդվածով նախատեսված բարենորոգումները չիրականացվեցին, հայերի
վիճակը Արևմտյան Հայաստանում ավելի վատթարացավ:

¹² ԱՋԱԵ, էջ 548:

«Անօգուտ շրջան, համդ, հոտդ անիծեմ» սկզբնատողով ստեղծագործության մեջ (1904 թ.) նա այլաբանորեն անդրադառնում է քանահյուսական երանգ ստացած «թղթե շերեփի» պատմությանը.

**Զիվան, հարուստները կազմեցին սեղան,
Առաջ բերին կերակուրներ զանազան,
Բաղտավոր ազգերը կերան, կշտացան,
Հայր մինչև անգամ փշրանք չը տեսավ¹³:**

«Բաղտավոր ազգեր» ասելով՝ աշուղը նկատի ունի բալկանյան ժողովուրդներին, որոնք Բեռլինի վեհաժողովի դաշնագրով ազատվեցին թուրքական լծից: Նա քանիցս ուղղակի հիշատակում է այդ ժողովուրդներին հակառակ հանվանե. «Բնչպես բուլղարներուն, սերբերուն արիք»¹⁴:

«Վեց հարուստ ըռեսի ձեռքով մի հատիկ արտ վարեցի» (1904 թ.) սկզբնատողով երգում արտի, ռեսերի ու բնական աղետի այլաբանությամբ արտահայտում է իր վերաբերմունքը Բեռլինի վեհաժողովի մասնակից վեց տերությունների ու հայ ժողովրդի ճակատագրում նրանց խաղացած դերի հանդեպ: «Ուրիշին հավատալով՝ փայլուն ճրաքս մարեցի», - դառնությամբ նկատում է աշուղը¹⁵: Բնչ վերաբերում է Ռուսաստանի խաղացած դերին, Զիվանին պատմահայրենասիրական թեմաներով ու մոտիվներով գրած երգերում այն միանշանակ չի գնահատել: Եվ դա միանգամայն բնական է՝ պայմանավորված հայ ժողովրդի կյանքում այդ ժամանակաշրջանում ցարիզմի իրական դերակատարմամբ: Բեռլինի վեհաժողովում Ռուսաստանի դիրքորոշումը հայանպաստ էր, հետագա տասնամյակներում այն իր հակադրությանը վերածվող փոփոխություններ կրեց: Աշուղի զգայուն քնարն ըստ այդմ արձագանքեց այդ իրողություններին:

«Աշոտ Ողորմածի գերեզմանի մոտ» խորագրով երգում¹⁶ նա մեծարում էր Ռուսաստանին, նրան «Գարի տեր» անվանում: Այնուհետև հաճախ՝ արծիվ, որից վախենում է ուրուրը՝ Թուրքիան: Հորդորում է նրան պաշտպան կանգնել հայ ժողովրդին, ազատել թուրքական լծից, 1902 թ. «Օթի մեջ սավառնող սրաթն Արծիվ» սկզբնատողով երգում գրում է.

**Դուն ես ինձ նշանել, դուն էլ պսակե,
Թող մեր տունն էլ մի օր լինի հարսանիք¹⁷:**

Զիվանին իրատեսորեն է գնահատում ռուս-թուրքական հարաբերությունները, մեկ հարյուրամյակում երկու երկրների միջև երեք

¹³ Նույն տեղում, էջ 153:

¹⁴ Նույն տեղում, էջ 524:

¹⁵ Նույն տեղում, էջ 543:

¹⁶ Նույն տեղում, էջ 245:

¹⁷ Նույն տեղում, էջ 610:

անգամ տեղի ունեցած պատերազմները, և նրա համակրանքն անվերապահորեն Ռուսաստանի կողմն է: «Հեռու արևելքում մի թզուկ ծնավ» սկզբնատողով երգում (1904 թ.) ներկայացնում է երկու հակադիր ուժերի. մի կողմում հեռավոր արևելքում ծնված թզուկն է՝ «դեղնագույն, փոքրաթիվ, կարճահասակ», մյուս կողմում՝ անպարտելի արծիվը, որի դեմ պատերազմի կրակ է բորբոքում թզուկը.

**Ջիվանի, թզուկը բարձրացավ բեմը,
Շեքեց պատերազմի կրակոտ շեմը,
Անպարտելի արծիվի ճուտերու դեմը,
Անգրդի թներով թռչիլ ըսկըսեց¹⁸:**

Թեև Ջիվանին կանոնավոր կրթություն չէր ստացել, բայց քաջատեղյակ էր Հայաստանի պատմությանը՝ վաղնջական ժամանակներից մինչև իր օրերը: Հաճախ, ըստ հարկին, նա անդրադառնում էր պատմության այս կամ այն դրվագին, պատմական հերոսին, համեմատության եզրեր գտնում՝ ներկան ավելի ընդգծելու համար: Այս տեսանկյունից, անհրաժեշտ է նշել, որ նա դիմում էր պատմության հատկապես այն էջերին, որոնք որոշակի գույզահեռներ էին գծում Հայկական հարցի հետ, խորհրդանշում հայոց երբեմնի պետականությունը և վերջինիս վերականգնման իդեալը:

Աշուղին սիրելի էին հերոսական պատմություն ունեցող բնակավայրերը (Սասուն, Ս. Էջմիածին և այլն): Այդ շարքում նրան հատկապես գրավել է Անին: Բազրատունյաց փառահեղ մայրաքաղաքը պատմական առումով հնարավորություն է տալիս աշուղին իր ցավն արտահայտելու քաղաքի անցյալի ու ներկայի համեմատությամբ.

**Ավերակ և ծիր Անի,
Երբեմն հագնում էիր
Կանաչ, կարմիր, ծիրանի¹⁹:**

1880 թ. Ջիվանին այցելում է Անի: «Աշոտ Ողորմածի գերեզմանի մոտ» երգում, համակված ժամանակին հայ հասարակական շրջաններում տիրող ոգևորությամբ, կապված Կարսի մարզը Ռուսաստանին միացնելու հետ, դիմելով հանգուցյալ թագավորին՝ նա գրում է.

**Ժողովուրդդ քու աշխարհում,
Բարի տեր է կառավարում,
Քաղցր նիրհդ չի խանգարում,
Հանգիստ ննջե, հայոց հսկա²⁰:**

¹⁸ Նույն տեղում, էջ 399:

¹⁹ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ջիվանու Փոնդ, գ. 63, թ. 3:

²⁰ Ա.ՋԱԵ, էջ 245:

Բնչ վերաբերում է Անի քաղաքին, ապա նա անցել է հզոր, քրիստոնյա տերության հովանու ներքո, հպարտությամբ նշում է աշուղը, մինչդեռ Հայաստան աշխարհի մեծ մասը հեծում է թուրքական լծի տակ: Անիի վերաբերյալ նրա ոգևորությունը հաջորդող տարիներին, սակայն, որոշակիորեն նվազում է, և երկու տասնամյակ անց նրա երգերում այլ մոտիվներ են հնչում, ինչպես, օրինակ՝ «Եկա տեսա կիսակենդան ավերակ» սկզբնատողով երգում է (1902 թ.): Անին վերաշինելու կապակցությամբ Զիվանին հույսեր էր տալով, որոնք ի դերն են ելնում: Դրա վկայությունն է՝ «Քեզ շեն էի կարծում, ավերակ գտա» տողը: Անիի ավերակների տեսքը նրա երգում համահունչ ապրումներ ու խոհեր է ծնում:

**Դարձել ես այրված, ավերված մերի,
Զավակներդ այրոց եղել են գերի,
Ցերեկդ փոխվել է խավար գիշերի,
Երբեմն վառ, փայլուն ճրաք, ով Անի²¹:**

Հայկական հարցին են առնչվում նաև Խրիմյան Հայրիկին նվիրված գործերը: Նա հետևում է Խրիմյան Հայրիկի գործունեությանը կաթողիկոս ընտրվելուց ի վեր և գնահատում է, գովերգում ու փառաբանում վերջինիս՝ իբրև իր հոտին անմնացորդ նվիրված արթուն հովվի, իր ազգի լեզվի, կրոնի ջերմ ու հավատարիմ պաշտպանի: Նրան ձոնված երգերը կարծես թե՝ ներկայացնում են նշանավոր հոգևորականի կյանքի տարեգրությունը՝ կաթողիկոս ընտրվելը, ժամանումը Ս. Էջմիածին և օծումը, գահակալությունն ու վախճանը: Նրա մասին առաջին ստեղծագործությունը գրվել է 1892 թ. մայիսի 7-ին²², երբ հայտնի է դառնում, որ Խրիմյան Հայրիկն ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Աշուղը մեծ հավատ ունի վեհափառի հանդեպ, նրան համեմատում է IV-V դդ. հայ նշանավոր հոգևոր գործիչներ՝ Ներսես Մեծի ու Սահակ Պարթևի հետ, համոզված է, որ թեև ընտրյալը ծեր է, բայց հոգով ու գաղափարով նոր է, հայրենիքն այդուհետև սուգ ու լաց չի անի, նրա վերքերին դեղ ու դարման կանի ազգընտիր կաթողիկոսը: Աշուղը համոզված է նաև, որ «Նորան կը հաստատե մեր թագավորը», այսինքն՝ ռուսական կայսրը: Կաթողիկոսի ընտրությունը պետք է հաստատեր Ռուսաստանի բարձրագույն իշխանությունը²³:

Խրիմյան Հայրիկին նվիրված երկրորդ երգը ստեղծվել է 1893 թ. հուլիսի 19-ին, երբ ռուսաց կայսրը հաստատել էր կաթողիկոսի ընտրությունը, և նա ուր որ է պետք է ժամաներ Էջմիածին: աշուղը «Վասպուրականի արծիվ» է անվանում Խրիմյանին, ավելի կոռովի ձայնով փառաբանում նրա անձնական արժանիքներն ու բարեմասնությունները: Ավելի հաստատ է դառնում նրա հավատը Խրիմյանի՝ իբրև հոգևոր գործչի փրկչական առաքելության, հայ

²¹ Նույն տեղում, էջ 211:

²² Նույն տեղում, էջ 329:

²³ Այս մասին տե՛ս Կунян А. В. Положение армянской церкви, Е., 2000.

ժողովրդի բարօրության, «ծաղկելու» վերաբերյալ: «Աստուծով կը կատարես մեր իղձերը անպատճառ», - ասում է հեղինակը:

Կարճ ժամանակ անց, 1898 թ. Ջիվանին նոր երգ է նվիրում Խրիմյան Հայրիկին՝ «Արևելյան կրոնապետ, ծիրանագարդ թապրունի» սկզբնատողով: Աշուղի ոգևորությունն անցել է. «Խուփդ քարին է դեմ առնում», ցավով ասում է նա, «Վիրավոր առյուծի նման կըրորենես ձագերըդ», և Հայրիկի ջանքերն ի դերն են ելնում: Խրիմյանին անվանում է «սևաբաղդ ծերունի»՝ նկատի ունենալով նրա՝ անցյալում կատարածը և կատարելիք դերը: Թեև «թղթե շերեփի» պատմության վերաբերյալ աշուղը համապատասխան գնահատական ունի, սակայն հույսը չի կորցնում.

**Ձագերդ գայլերու ձեռքից ազատես, փրկես պիտի,
Արդարոց դեպի դրախտը հույսով եմ՝ դրկես պիտի,
Միմեռն ծերունու նման փրկիչը գրկես պիտի,
Հույս ու հավատդ վառ է, վեհապետ քաջազնունի²⁴:**

Խրիմյան Հայրիկի մահը խորապես ցնցում է Ջիվանուն: Այդ տխուր իրողության մասին է «Էջմիածինը խիստ կուլա» սկզբնատողով երգը (1907 թ.), որտեղ հիշվում է Խրիմյանի անկատար մնացած խոստումը.

**Պիտ օծեիր հայոց իշխան,
Խոստումդ ո՞ւր մնաց, Հայրիկ²⁵:**

Ջիվանին իր գովքն ու ձոնը ստեղծելիս միշտ աչքի առաջ է ունեցել տվյալ անհատի վերաբերմունքը, հավատարմությունն ու նվիրվածությունը Հայաստանին և հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին: Այդ սկզբունքից, հավատամքից ելնելով է նա գնահատում Խրիմյանի հաջորդ կաթողիկոսի՝ Երկաթյա պատրիարքի՝ Մ. Բզմիրյանի ընտրությունը.

**Ձեռակերտ Տրդատի և Լուսավորչի,
Երկնքի հարս, Քրիստոսի թաքուհի,
Ուրախացիր, ինդա, հայ եկեղեցի,
Արթուն հովիվ՝ քեզ պահապան է գալիս²⁶:**

Ջիվանին մեծարում, գովաբանում է Մ. Բզմիրյանին՝ իբրև «երկաթե կամքի տեր, ձագերին կուտ ու ջուր տվող զթոտ հավի, հոգևոր բժշկի, բուժող՝ վերք ու ցավ»: Կաթողիկոսական գահին պիտի նստի Խրիմյանին միանգամայն արժանի հոգևորական, կարծում է Ջիվանին:

«Հայե՛ր, օգնենք Վասպուրական աշխարհին» սկզբնատողով ստեղծագործության մեջ (1879 թ.) այն միտքն է ընդգծվում, որ՝ եթե Հայաստանը

²⁴ Նույն տեղում, էջ 189:

²⁵ Նույն տեղում, էջ 251:

²⁶ Նույն տեղում, էջ 540:

դատարկվի հայերից, ապա ինքնաբերաբար վերջ կգտնի Հայկական հարցը, և այն լուծելու համար ժողովուրդը պետք է պինդ կառչի հայրենի հողին: Վանում, Վասպուրական աշխարհում մոլեգնող սուլը սպառնում էր երկիրն ամայացնել, անհրաժեշտ էր օգնության ձեռք մեկնել «բազմահայ» երկրին, որից մի օր «պիտի ծագե լույս»: Այլապես՝

**Թե չը լինի ամեն մեկիս խառնուրդը,
Չի կատարվի նրանց սրտի խորհուրդը,
Եթե ցրվի այնտեղի ժողովուրդը,
Հաստատ հավատացեք՝ մեր վերջը վա՛յ է՝²⁷:**

Հայության հուսախաբությունները, հիասթափությունը եվրոպական պետությունների երկդիմի վերաբերմունքից Զիվանին արդեն արտահայտում է աշուղական այլաբանությամբ: Միաժամանակ, նույն աշուղական բանաստեղծությանը բնորոշ խրատականությամբ նա հորդորում է ազգային միասնականության, հայերի համախմբման, երկրի ու ժողովրդի հզորացման, որպեսզի հայության ձայնն ուժեղ հնչի, և նրա հետ հաշվի նստեն մեծ տերությունները:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում հայերի շարունակական, հարատևող զանգվածային կոտորածներն ու Անդրկովկասում ստեղծված քաղաքական աննպաստ մթնոլորտը չափազանց ծանր ազդեցություն թողեցին Զիվանու վրա: Եղավ մի շրջան, երբ աշուղը կարծես թե վերջնականապես հուսահատվեց: 1895 թ. դեկտեմբերի 10-ին նա գրեց մի երգ («Տեր ողորմյա»), որի ամբողջական բնագիրը, ցավոք, հնարավոր չէ վերականգնել: Հետագայում աշուղը այն դարձրեց «Ազգիս տեր ողորմյան»՝ երգին տալով առավել քնդհանրացնող, համազգային բնույթ: Փրկության ուղի, էլք չգտնելով՝ Զիվանին այս ստեղծագործության մեջ Աստծուց ողորմություն է հայցում իր խաչյալ որդու՝ հայ ժողովրդի համար: Եկող նոր տարին սովորաբար լավատեսական մաղթանքների և տրամադրության է մղում: Զիվանին, սակայն, տարեվերջին (համիդյան ջարդերի սկսնական շրջանում) գրված այս բանաստեղծությունում խորին հուսահատությամբ է նայում ապագային և ապավինում է Աստծուն: Անանձնական ցավով ու մտահոգությամբ է նա դիմում Աստծուն՝ իր աղերսն արտահայտելով Միմեոն Ա Երևանցու (կաթողիկոս՝ 1763-1780 թթ.) տողերի հետևողությամբ: Միմեոն կաթողիկոսի կողմից «Աղօթք» վերնագրված գործը, որ հայտնի է «Արի՛, Աստուած հարցրն մերոց...» սկսվածքով, Զիվանին իր ստեղծագործության վերնագրում հիշում է «Տեր ողորմեա» ձևով, որը, որպես կրկնակ, դրված է Միմեոն կաթողիկոսի «Աղոթքի», յուրաքանչյուր տան վերջում: Զիվանու «Ազգիս Տեր ողորմյան»՝ Միմեոն կաթողիկոսի ստեղծագործության նորովի իմաստավորումն է՝ գրված ի տես սկսված արհավիրքի: Ավելորդ չենք

²⁷ Նույն տեղում, էջ 374:

համարում նշել, որ երկու տասնամյակ անց ազգային մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը Հայոց Մեծ եղեռնին կարճագանձի նմանաբնույթ «Հոգեհանգիստ» բանաստեղծությամբ: Ազգի ողբերգությամբ ապրող երկու զգայուն, մեծ հոգիները միանման են ընկալում ու վերապրում մայր ժողովրդին հասած աղետը:

Երգերում տեղ գտած Ջիվանու խոհերն ու մտորումները, փրկության ելքի որոնումները հանգեցնում են սեփական ուժերին ապավինելու համոզմանը, որը XIX դ. վերջին և XX դ. սկզբին տիրապետում էր հայկական հասարակական որոշ շրջաններում: 1902 թ. Շուշիում գրած «Ռոստոլը քեզ հալածում է» սկզբնատողով երգում նա ասում է.

**Հույսդ դիր քու ուժիդ վրա,
Ասպարեզից հետ մի մնա,
Այժմ ողբի լսող չկա,
Մի անի լաց ու թաց, եղնիկ²⁸:**

Ջիվանին այլ ուղի չի տեսնում, բացի զինված ինքնապաշտպանությունից: Հարևանը վայրենի է ու բիրտ, կեղծավոր, ուխտադրուժ ու անկիրթ.

**Տեսնում ես՝ դրացիդ բարեբարո չէ,
Պիտի ուժդ ցույց տաս, որ երկյուղ կրե²⁹...**

Դարասկզբին Ջիվանին հուսախաբության պահեր հաճախ էր ունենում: Կարծես թե փրկության ելք չկա. թանձր խավարը պատել է հայրենի երկիրը, ու իր է այն փրկիչը, որ պիտի գա ու ազատի, դժոխքից դուրս բերի հայ ժողովրդին.

**Մեզ դահիջ են դարձել անխիղճ թուրք ու քուրդ,
Ձեռք-ձեռքի են տվել, արել են խորհուրդ,
Թող գա փրկե մեկ տառապյալ ժողովուրդ,
Ով գիտե փրկության ճարը հայրենյաց³⁰:**

Ջարմանալի մի կանխատեսությամբ «Հարց ու պատասխան» խորագրով երգում դաժան, բայց իրականությունից բխող վերլուծության է ենթարկված հայոց ազգային կյանքը, դատապարտված են այն չարիքները, աղետները, որ բացասաբար են անդրադարձել հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագրի վրա: Աշուղը հռետորական հարց է տալիս ու պատասխանում, որ դրախտ երկիրը ավեր են դարձրել նախ և առաջ գաղթերը: Ջիվանու

²⁸ Նույն տեղում, էջ 505:

²⁹ Նույն տեղում, էջ 290:

³⁰ Նույն տեղում, էջ 223:

ստեղծագործական կյանքում այդ համոզմունքից երբևէ շեղում չնկատվեց. մեծ աշուղը, ելնելով իրադարձությունների ողբերգական զարգացումից, տազնապում է ու մարգարեանում.

*Եթե որ գործերը այսպես վատ գնան,
Դժվար Հայաստանում էլ հայեր մնան,
Անգութ թուրքի սրին ճարակ կդառնան,
Կվերջանա տաջկահայոց խնդիրը³¹:*

Շեշտենք, որ այս տողերը գրվել են Հայոց Մեծ եղեռնից ուղիղ տասը տարի առաջ՝ 1905 թ. ապրիլի 24-ին:

ТРАКТОВКА АРМЯНСКОГО ВОПРОСА АШУТОМ ДЖИВАНИ

ПОГОСЯН Т. Г.

Резюме

Трезво оценивая положение армянского народа в Западной Армении в 1878-1880 гг., Дживани призывал следовать политике “железного половника” католикоса Мкртыча Хримяна. Подобные настроения он поэтически выражал в своих песнях. Поэт переживал за судьбу армянского народа, особенно за его будущее в тот сложный период, который предшествовал геноциду, организованному и осуществленному младотурками.

INTERPRETATION OF THE ARMENIAN QUESTION BY JIVANI

T. POGHOSYAN

Abstract

Giving reasonable assessment of the situation of the Armenian people in Western Armenia in 1878-1880, Jivani urged to follow the “iron ladle” policy of Catholicos Mkrtich Khrimyan. He expressed similar sentiments in his songs. The poet worried about the fate of the Armenian people, especially for their future in the period that preceded the genocide initiated and implemented by the Young Turks.

³¹ Նույն տեղում, էջ 299: